ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/18

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.01.2021թ. թիվ 26/26/609-2021 գրությամբ «Ալեքսիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի 28.12.2020թ. թիվ 66 և 18.01.2021թ. թիվ 69 գրությունների հիման վրա 20.01.2021թ. թիվ 26/26/609-2021 գրությամբ նախաձեռնել է «Ալեքսիմ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ալեքսիմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ալեքսիմ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ալեքսիմ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/18 ընթացակարգի շրջանակներում 22.01.2021թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 28.12.2020թ. թիվ 66 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «ԿԶՆԱԿ» հիմնադրամի կարիքների համար իրականացված «ԿԴՍՀ-ԳՀԱՊՁԲ-2020/04» ծածկագրով գնման ընթացակարգում հաղթող մասնակից ճանաչված «Ալեքսիմ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 06949225) հրաժարվել է պայմանագրի կատարումից՝ պայմանագրի վերջին օրը 25.12.2020թ. բանավոր հայտարարելով, որ 11.11.2020թ. թիվ «ԿԴՍՀ-ԳՀԱՊՁԲ-2020/06-01» պայմանագրի արդյունքը առկա չէ և հրաժարվում է պայմանագրի կատարումից»:

Այնուհետև՝ 18.01.2021թ. թիվ 69 գրությամբ, հայտնել է, որ իր լրումն 28.12.2020թ. թիվ 66 գրության՝ կից ներկայացնում է «Ալեքսիմ» ՍՊԸ-ի հետ կնքված թիվ «ԿԴՍՀ-ԳՀԱՊՁԲ-2020/06-01» պայմանագիրը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը և ծանուցումը տեղեկագրում հրապարակելու վերաբերյալ ապացույց՝ հրապարակման ամսաթվի նշումով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/18 ընթացակարգի շրջանակներում 22.01.2021թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/18 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/18 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «ԿԶՆԱԿ» հիմնադրամի և «Ալեքսիմ» ՍՊԸ-ի միջև 11.11.2020թ. կնքվել է թիվ «ԿԴՍՀ-ԳՀԱՊՁԲ-2020/06-01» ծածկագրով կայուն դպրոցական սնունդ հիմնադրամի

կարիքների համար համազգեստ խոհարարի գնման պայմանագիր պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Համազգեստ խոհարարի ձեռքբերման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. Պայմանագրին կից N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է մատակարարվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, իսկ մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագրի կնքման օրվանից հետո մինչև 25.12.2020թ.:

3. Պատվիրատուն «Ալեքսիմ» ՍՊԸ-ին ուղղված 08.01.2021թ. թիվ 68 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

««ԿԶՆԱԿ» հիմնադրամի և «Ալեքսիմ» ՍՊԸ-ի միջև 11.11.2020թ. կնքված թիվ «ԿԴՍՀ-ԳՀԱՊՁԲ-2020/06-01» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակում Կատարողը ստանձնել էր «Համազգեստ խոհարարի» տրամադրման պարտավորություն:

Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծվում է:

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակվում է www.procurment.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը՝ 11.01.2021թ.»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 11.01.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.01.2021թ. թիվ 26/26/609-2021 գրությունը, «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն»

հիմնադրամի 28.12.2020թ. թիվ 66 և 18.01.2021թ. թիվ 69 գրությունները՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

<u>ա. խախտել է պայմանագրով</u> նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ***<u>ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը</u>*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «ԿԶՆԱԿ» հիմնադրամի և «Ալեքսիմ» ՍՊԸ-ի միջև 11.11.2020թ. կնքվել է թիվ «ԿԴՍՀ-ԳՀԱՊՁԲ-2020/06-01» ծածկագրով կայուն դպրոցական սնունդ հիմնադրամի կարիքների համար համազգեստ խոհարարի գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Համազգեստ խոհարարի ձեռքբերման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրին կից N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է մատակարարվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, իսկ մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագրի կնքման օրվանից հետո մինչև 25.12.2020թ.:

Պատվիրատուն «Ալեքսիմ» ՍՊԸ-ին ուղղված 08.01.2021թ. թիվ 68 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

««ԿԶՆԱԿ» հիմնադրամի և «Ալեքսիմ» ՍՊԸ-ի միջև 11.11.2020թ. կնքված թիվ «ԿԴՍՀ-ԳՀԱՊՁԲ-2020/06-01» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակում Կատարողը ստանձնել էր «Համազգեստ խոհարարի» տրամադրման պարտավորություն:

Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծվում է:

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակվում է www.procurment.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը՝ 11.01.2021թ.»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 11.01.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.3-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ապրանքի ձեռքբերման ժամկետը:

Այսպիսով՝ համաձայն գործում առկա նյութերի՝ արձանագրում եմ, որ «Ալեքսիմ» ՍՊԸ-ն խախտել է իր և «ԿԶՆԱԿ» հիմնադրամի միջև 11.11.2020թ. կնքված Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարման ժամկետը, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Ալեքսիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.01.2021թ. թիվ 26/26/609-2021 գրությամբ «Ալեքսիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ալեքսիմ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**